ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ **«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ԱՌԿԱ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ, ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԺԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ»** ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

(այսուհետ՝ հանձնաժողով)

2023 թ. դեկտեմբերի 15-ին ժամը 14:00 –ին կայացած նիստի

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

1. Արթուր Մարտիրոսյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)

Մասնակցում էին՝

2. Զարա Ասլանյան՝ / հեռավար/ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության պետ (հանձնաժողովի անդամ)
3. Վերոնիկա Խորասանյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ),
4. Անուշ Մխիթարյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ),
5. Ռեգինա Առաքելյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ),
6. Նարինե Հովհաննիսյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի գլխավոր մասնագետ ժ/պ (հանձնաժողովի քարտուղար):

Օրակարգային հարցեր

1. Դրամաշնորհային մրցույթին դիմած հայտերի բացում:
2. Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում:

Ա. Մարտիրոսյանը հայտարարեց նիստը բացված:

1) Օրակարգի 1-ին հարց

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից «ԵՔ-ԴՄ-ԲՊ-01/24» ծածկագրով դրամաշնորհային մրցույթի ընթացակարգին հայտ են ներկայացրել՝ «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպությունը, «:Բուն» Գիտամշակութային հիմնադրամը,«Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը:

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Մասնակիցների հասցեներ	Մասնակիցների էլ. հասցեները	Մասնակիցների հեռախոսահամարներ	Մասնակիցների առաջարկած գինը /ՀՀ դրամ/
1	«Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպությունը	ՀՀ, ք. Երևան .Բաղյան 2	info@fulllife.am, suren@fulllife.am	+374 60 755155 +374 93 585844	2.642.952 (ներառյալ ԱԱՀ)
2	«:Բուն» Գիտամշակութայ ին հիմնադրամը	ՀՀ ք. Երևան 0031, Բաշինջաղ յան 133,	gemafin.gasparyan@boon.am, nane.minasyan@boon.am , boon@boon.am	+374 77 110027, +374 55 740653	2. 688. 000 (ներառյալ ԱԱՀ)
3	Տարածքային զարգացման և հետազոտություն ների կենտրոն ՀԿ	ՀՀ, Գեղարքու նիքի մարզ, ք.. Սևան, Նաիրյան 164,3-րդ հարկ	rdrcngos@gmail.com marba20212019@gmail.com , satik.badeyan@gmail.com	+374 99085814, +374 91591272	2.638.800 (ներառյալ ԱԱՀ)

Հայտերի ուսումնասիրությունից հետո Հանձնաժողովը նկատեց, որ

- «:Բուն» Գիտամշակութային հիմնադրամի կողմից թերի են ներկայացված ՄԱՍ I 2.4 կետի 3) ենթակետով պահանջվող ծրագրում ընդգրկված հրավիրյալ մասնագետների ինքնակենսագրականները և տվյալ ծրագրում ընդգրկվածության համաձայնագրերը՝ ներառյալ աշխատավարձի չափը, նաև ՄԱՍ I 4.3 կետի 2)-րդ ենթակետով պահանջվող ֆինանսական նախահաշվով ներկայացված ծառայությունների/ապրանքների ձեռքբերման համար անհրաժեշտ գնառաջարկները:
- Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն ՀԿ կողմից ներկայացված փաթեթում բացակայում են ՄԱՍ I 2.4 կետի 2) և 3) ենթակետով ծրագրային աշխատակազմի տվյալ ծրագրում ընդգրկվածության վերաբերյալ համաձայնագրերը՝ ներառյալ աշխատավարձի չափը, նաև ՄԱՍ I 4.3 կետի 2)-րդ ենթակետով պահանջվող ֆինանսական նախահաշվով ներկայացված ծառայությունների/ապրանքների ձեռքբերման համար անհրաժեշտ գնառաջարկները, առկա են ծրագրի իրականացման ժամկետների անճշտություններ:

Օրակարգի հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

1. Առաջարկել «:Բուն» Գիտամշակութային հիմնադրամին, Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն հասարակական կազմակերպությանը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2023 թվականի դեկտեմբերի 19-ը ներառյալ) Հանձնաժողովի կողմից արձանագրված անճշտությունները շտկել և ուղարկել հանձնաժողովի քարտուղարի էլ. փոստին՝ narine.hovhannisyan@escs.am:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2) **Օրակարգային 2-րդ հարց**

Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում:

Օրակարգի 2-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հանձնաժողովի հաջորդ նիստի օրը նշանակել վերոնշյալ լրամշակումները ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ս.թ. դեկտեմբերի 20-ը, ժամը՝ 11:00-ն, վայրը՝ Վ.Սարգսյան 3, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, 6-րդ հարկ, 605 սենյակ:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Արթուր Մարտիրոսյան _____

Զարա Ասլանյան _____

Վերոնիկա Խորասանյան _____

Անուշ Մխիթարյան _____

Ռեգինա Առաքելյան _____

Նարինե Հովհաննիսյան _____